



Հանրային Առողջության Վարչության թույլտվության դիմումի ցուցումներ
MICROENTERPRISE HOME KITCHEN OPERATION-ի (MEHKO) համար



Շրջակա Միջավայրի և Առողջության Բաժին
Տնային պայմաններում սննդի գործառնությունների ծրագիր
 5050 Commerce Drive, Baldwin Park, CA 91706-1423
www.publichealth.lacounty.gov/eh
homebasedfoods@ph.lacounty.gov | (626) 430-9855

Խնդրում ենք լրացնել յուրաքանչյուր բաժին ամբողջությամբ՝ տպելով և այնուհետև ձեռքով լրացնելով կամ լրացնելով PDF տարբերակը: Խնդրում ենք տեսնել այս դիմումի հետ ներկայացվող պահանջվող փաստաթղթերի ցանկը և վճարման հրահանգները: Դիմումը կվերանայվի 20 աշխատանքային օրվա ընթացքում:

1. Մուտքագրեք դիմումի ամսաթիվը

2. Տեղեկատվություն MEHKO-ի մասին

- a. Բիզնեսի անվանումը
- b. Բիզնեսի հասցեն
 - i. Բնակարանի համար (եթե կիրառելի է), քաղաք, փոստային ինդեքս
- c. Բիզնեսի սեփականատիրոջ տվյալներ
 - i. Անուն և ազգանուն
 - ii. Էլեկտրոնային փոստի հասցե
 - iii. Հեռախոսահամար

3. Հաշվարկային տեղեկատվություն

- a. Նշեք վանդակը, եթե ցանկանում եք, որ հաշիվ-ապրանքագիրն ուղարկվի ձեր բիզնեսի հասցեին
- b. Նշեք վանդակը, եթե ցանկանում եք, որ հաշիվ-ապրանքագիրն ուղարկվի մեկ այլ հասցեով, որը ընկերության բիզնես հասցեն **չէ**
 - i. Հասցե
 - 1. Բնակարանի համար (եթե կիրառելի է), քաղաք, նահանգ, փոստային ինդեքս

4. Տեղեկություններ վճարների մասին (վճարները ենթակա չեն վերադարձման կամ փոխանցման)

- a. Նշեք վանդակը, եթե վճարում եք **հայտի սկզբնական վերանայման** համար 1-ին տնային խոհանոցի գնահատման, դիմումի, ստանդարտ գործառնական ընթացակարգերի վերանայման և մենյուի վերանայման համար (**մեկանգամյա վճար**)*
 - i. **Վճարը՝ 597 ԱՄՆ դոլար**
- b. Նշեք վանդակը, եթե **գնահատման** վճար եք վճարում ձեր մենյուում կամ սարքավորման մեջ կատարված փոփոխությունների համար՝ հաստատումը ստանալուց հետո: Սա **ժամավճարով է**:
 - i. Ժամավճարը կազմում է 167 ԱՄՆ դոլար
- c. **Ծանուցում.** Ձեզ հետ կկապվեն՝ տնային խոհանոցի գնահատում նշանակելու համար: Եթե տնային խոհանոցը հաստատվի, **MEHKO-ի հանրային առողջության վարչության թույլտվության վճարը 347 ԱՄՆ դոլարի չափով հաշիվ-ապրանքագիր կգրանցի** սեփականատիրոջը: Թույլտվության վճարը վճարվում է խոհանոցի հաստատումից հետո **30 օրվա** ընթացքում: [Մի ուղարկեք ձեր վճարումը այս վճարի համար, մինչև չստանաք հաշիվ-ապրանքագիր:](#)

Պահանջվող վճարները չվճարելը կխախտի Լոս Անջելեսի վարչաշրջանի օրենսգրքի 8-րդ վերնագիրը՝ սպառողների պաշտպանություն, բիզնես և աշխատավարձի կարգավորում, և դուք կարող եք տուգանքների ենթարկվել:

5. Նախնական հայտի վերանայում վճարներից հրաժարվելու համար

Լոս Անջելեսի վարչաշրջանն առաջարկում է միանվագ վճարից հրաժարում մինչև 1000 MEHKO-ի թույլտվություն ստացողների համար: Վճարից հրաժարվելը կֆինանսավորի նախնական հայտի վերանայման 597 ԱՄՆ դոլարի արժեքով: Վճարից հրաժարվելը հասանելի է մինչև 2026 թվականի հունիսի 30-ը կամ մինչև ֆինանսավորման ավարտը:

Ինչպե՞ս կարող եմ հասկանալ, արդյո՞ք իրավասու եմ վճարից հրաժարվելու համար:

- Եթե ձեր MEHKO-ն Pasadena (Փասադենա) քաղաքում, Long Beach-ում (Լոնգ Բիչ) կամ Vernon-ում (Վերնոնում) չէ
- MEHKO-ի թույլտվության տարեկան շահույթը 50,000 ԱՄՆ դոլարից պակաս է: Պարզելու համար, թե որն է ձեր տարեկան շահույթը, հանեք ընդհանուր եկամուտը ձեր ծախսերից:
- Ինձ երբեք չի տրվել MEHKO հանրային առողջության թույլտվություն Լոս Անջելեսի վարչաշրջանում և չեմ ազատվել դիմումի նախնական վերանայման վճարից:

Հաստատում եմ

- Լրացնելով և ներկայացնելով MEHKO Հանրային առողջության թույլտվության դիմումի այս բաժինը, ես ընդունում եմ, որ միանվագ սուբսիդավորում եմ խնդրում Լոս Անջելեսի վարչաշրջանի Հանրային առողջության վարչության Շրջակա միջավայրի առողջության բաժնից (EH):
- Ես ընդունում եմ, որ սուբսիդավորումը ծածկելու է 597 ԱՄՆ դոլար MEHKO հանրային առողջության թույլտվության դիմումի նախնական վերանայման վճարի 100%-ը:
- Ես ընդունում եմ, որ սուբսիդավորումը Չի ծածկելու տեղանքի որևէ լրացուցիչ գնահատում, լրացուցիչ դիմումի վերանայում կամ հանրային առողջության թույլտվության արժեքը:
- Ես ընդունում եմ, որ սուբսիդավորման հարցում ստանալը չի երաշխավորում, որ ինձ կհաստատեն և կտրամադրեն MEHKO թույլտվություն:
- Ես ընդունում եմ, որ ենթարկվելու եմ Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքի պահանջներին և պետք է ավարտեմ հաստատման գործընթացը Հանրային առողջության դեպարտամենտի միջոցով:
- Ես հայտարարում եմ, որ եթե ինձ սուբսիդավորում տրվի, իմ պատմությունը կարող է օգտագործվել գովազդային և մարքեթինգային նպատակների համար՝ ներկայացնելու վարչաշրջանի ձեռքբերումները:
- Ես ընդունում եմ, որ եթե ես սուբսիդավորում ստանամ, բայց միևնույն ժամանակ որոշում կայացնեմ չչարունակել համագործակցությունը MEHKO-ի հետ, ես այդպիսով կկորցնեմ սուբսիդավորումը. ինձ ոչ մի դրամական վճար չի տրամադրվի:

Նշեք վանդակը, եթե ցանկանում եք դիմել MEHKO-ի սկզբնական հայտի վերանայման վճարից հրաժարվելու համար

Եթե ցանկանում եք դիմել վճարից հրաժարվելու համար, մուտքագրեք ձեր անունը և ազգանունը ստորոջ նշված տողում և խնդրում ենք կարդալ պնդումը.

Ես, _____ (անուն և ազգանուն) Կալիֆորնիայի օրենսդրության համաձայն սուտ վկայություն տալու համար պատժի տակ հայտարարում եմ, որ վերը նշված տեղեկատվությունը հավաստի է: Ես նաև հասկանում եմ, որ եթե ես կեղծ հայտարարություններ, կեղծ հավաստիացումներ անեմ կամ սուբսիդավորում ստանալու նպատակով վարչաշրջանին տրամադրեմ ապակողմնորոշիչ կամ թերի տեղեկատվություն, կարող եմ որակազրկվել ծրագրից, ենթարկվել քաղաքացիական պատասխանատվության և տույժերի, ես պետք է վերադարձնեմ սուբսիդավորման գումարը, և ես կարող եմ բացառվել կամ զրկվել այլ վարչաշրջանային ծրագրերին մասնակցելու իրավունքից:

6. Պայմանագրի պայմանները

Ես սույնով հավաստում եմ սուտ վկայության համար պատժի ներքո, որ վերոնշյալ տեղեկատվությունը ճշմարիտ է և ճիշտ՝ իմ գիտելիքների չափով և կգործարկեմ իմ MEHKO-ն՝ Կալիֆորնիայի Առողջապահության և անվտանգության օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան:

Ես հասկանում եմ, որ MEHKO-ները կարող են օրական վաճառել մինչև 30 բաժին սնունդ. շաբաթական ոչ ավելի, քան 90 բաժին սնունդ և կարող են տարեկան վաստակել մինչև 100,000 ԱՄՆ դոլար: Ես հասկանում եմ, որ MEHKO-ները կարող են օրական վաճառել մինչև 80 բաժին սնունդ, շաբաթական ոչ ավելի, քան 200 բաժին սնունդ և կարող են տարեկան վաստակել մինչև 150,000 ԱՄՆ դոլար, եթե համագործակցեն հաստատված կոմպակտ շարժական սննդի ընկերության հետ:

Ես ընդունում եմ, որ MEHKO-ի հանրային առողջության թույլտվությունները չեն կարող փոխանցվել կամ վերադարձի ենթարկվել: Ես հասկանում եմ, որ վերադարձը կարող է դիտարկվել միայն այն դեպքում, եթե միջոցները ձեռք են բերվել ավելցուկով, սխալմամբ կամ որպես կրկնակի վճարում: Ես գրավոր կտեղեկացնեմ այս գործակալությանը, եթե դադարեցնեմ իմ գործունեությունը կամ փոխեմ վճարման հասցեն: Ես հասկանում եմ, որ այս պահանջը չկատարելը կարող է հանգեցնել լրացուցիչ տուգանքների վճարման անհրաժեշտության:

Ես հասկանում եմ, որ հանրային առողջության վավեր թույլտվության բացակայությունը կարող է հանգեցնել MEHKO-ի փակմանը՝ համաձայն Լոս Անջելեսի վարչաշրջանի օրենսգրքի, Կալիֆորնիայի աշխատանքի առողջության և անվտանգության օրենսգրքի և (կամ) գործող տեղական քաղաքային կանոնակարգերի:

Հանրային առողջության թույլտվության տրամադրումից հետո ես սույնով համաձայնում եմ բոլոր անհրաժեշտ ստուգումներին, որոնք իրականացվում են Հանրային առողջության դեպարտամենտի, շրջակա միջավայրի առողջության բաժնի կողմից:

Ես հասկանում եմ, որ իմ հաստատված գործառնությունների ցանկացած փոփոխություն, ներառյալ ճաշացանկը և սարքավորումը, պետք է գրավոր տեղեկացվի շրջակա միջավայրի առողջության բաժնին՝ Նախքան փոփոխությունը բսան (20) օրացուցային օրվա ընթացքում:

Վանդակ 1. Մուտքագրեք սեփականատերերի անունը

Վանդակ 2. Տիպեք սեփականատերերի ստորագրությունը

Վանդակ 3. Մուտքագրեք ամսաթիվը

7. Խնդրում եմք ներկայացնել ստորոջ նշված փաստաթղթերն այս դիմումի հետ միասին

- Նույնականացման պատճենը: Նույնականացումը ներառում է վարորդական իրավունքի վկայական, անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:
- Ստանդարտ գործառնական ընթացակարգեր և մենյու
- Սննդի անվտանգության մենեջերի վկայական (Food Safety Manager Certificate)
- Սննդի մշակման քարտ(եր) (Food Handler Card) MEHKO-ում աշխատող բոլոր աշխատակիցների և (կամ) անհատների համար (այն կարող է տրամադրվել աշխատանքի ընդունման պահից 30 օրվա ընթացքում)
- Ջրհորի ջրի փորձարկման արդյունքներ (եթե կիրառելի է)

8. Դիմումի ներկայացում.

- **Ներկայացրեք առցանց դիմում** տնային սննդի կազմակերպման ծրագրի համար՝ զանգահարելով 626-430-9855 հեռախոսահամարով կամ Էլ. նամակ ուղարկելով homebasedfoods@ph.lacounty.gov ապահով Էլ. փոստ ստանալու համար:

- **Ներկայացրեք դիմումն անձամբ՝** 5050 Commerce Drive, Baldwin Park, CA 91706

9. Վճարումներ կատարելու համար.

- Վճարեք ձեր հանրային առողջապահական թույլտվության համար, երբ հաշիվ-ապրանքագիր եք ստանում
- Նշեք ձեր հաշիվ-ապրանքագրի համարը, եթե այն վճարում եք փոստով
- Փոստով կանխիկ գումար մի ուղարկեք
- **Վճարումները կարող են կատարվել առցանց՝**
 - Կրեդիտ քարտ (Visa, MasterCard, American Express կամ Discover)
 - Դեբետային քարտ
 - Էլեկտրոնային չեկ (ECheck)
 - Առցանց վճարման համար գանձվում է լրացուցիչ վճար:
- **Վճարումները կարող են կատարվել փոստով.**
 - Check, Cashier’s Check, կամ Money Order
 - Վճարումները կատարեք (payable) Լոս Անջելեսի վարչաշրջանի անունով
 - Չեկի նշումի տողում դրեք «MEHKO»
 - Ուղարկեք փոստով՝ Հանրային առողջապահության վարչություն
 - Հանրային Առողջության Վարչություն
 - 5050 Commerce Drive
 - Baldwin Park, CA 91706
- **Վճարումները կարող են կատարվել անձամբ.**
- **Անձամբ ընդունվող վճարման տեսակներն են.**
 - Cash, Check, Cashier’s Check, կամ Money Order
 - Խնդրում ենք վճարել ճշգրիտ վճարման ենթակա գումարով
- **Վճարեք անձամբ Շրջակա միջավայրի առողջության շտաբում.**
 - Հասցե՝ 5050 Commerce Drive, Baldwin Park, CA 91706
 - Աշխատանքային ժամերը 8:00-ից 16:30, երկուշաբթիից ուրբաթ